ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ
Ընտրությունների դիտորդական առաքելություն
Հայաստանի Հանրապետություն
Խորհրդարանական ընտրություններ 2007

ՀՀ, Երևան, փ. Երվանդ Քոչարի17/2
Հեռ.: +374 (0)10 552399/552499/554399
Ֆաքս: +374 (0)10 554299
Էլ-փոստ: office@odihr.am

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ ԹԻՎ 1
13 – 22 մայիսի, 2007թ.

I. ԱՄՓՈՓՈՒՄ

- Մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրություններին և Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության (ԸՄԴԱ) Նախնական հայտնաբերումների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությանը հաջորդիվ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) շարունակել է դիտարկել արդյունքների ամփոփումը, հրապարակումը և բողոքների ու դիմումների վարույթը:

- Ընտրական գործընթացի վերջին փուլերի ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը որոշակի անհամապատասխանություններ է դիտարկել սահմանված կարգավորումներից, ինչպես նաև շեղումներ ընտրական լավագույն փորձից, որոնք չեն նպաստում ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության ամրապնդմանը:

- Քվեների հաշվարկը և ամփոփումը ձգձգված էին, սակայն, ընդհանուր առմամբ, ավարտվեցին օրենքով նախատեսված ժամկետներում: Այնուամենայնիվ, Երևանի ընտրատարածքների ամփոփված արդյունքները կայքում տեղադրումը ձգձգվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից, ինչը խարխլեց այս ընտրությունների համար տեղադրված թափանցիկության միջոցները:

- Դիտարկվել է, որ մի քանի Ընտրատարածքային հաձնաժողովներ (ԸԸՀ) հանձնարարական են տվել ուղղումներ կատարել Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) արձանագրություններում, այդ թվում՝ հարմարեցումներ «սկզբնական տվյալներին» (օրինակ՝ ըստ ընտրացուցակների ընտրողների թիվը, ստացված քվեաթերթիկների թիվը), որոնք հակասում են Ընտրական օրենսգրքին:

- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը տարբերություններ է դիտարկել՝ դրանցից որոշը զգալի, որոնք տեղ են գտել ընտրատեղամասերում հաստատված արձանագրությունների պատճենների և ըստ ընտրատարածքների բերված նախնական այն արդյունքների միջև, որոնք ամփոփվել էին ԸԸՀ-ի կողմից և փոխանցվել էլեկտրոնային տարբերակով՝ հիմնականում համակարգչային ցանցի միջոցով: Թեև նման սխալները, հնարավոր է, միտումնավոր չէին, դրանք ներառում էին սխալ տողերում լրացված թվեր, սխալ հաշվարկներ և շեղումներ սկզբնական տվյալներում:

- ԿԸՀ-ի ինն անդամներից երեքը հրաժարվեցին ստորագրել երկրի կտրվածքով համամասնական ընտրապայքարի նախնական արդյունքների արձանագրությունը՝ մեջբերելով խախտումների դեպքեր, որոնք հարցի տակ են դնում արդյունքների ճշգրտությունը: Նրանք նաև հրաժարվեցին ստորագրել վերջնական արդյունքների արձանագրությունը:

Սույն միջանկյալ զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը:

- Արդյունքների վերահաշվարկների դիմումներ են նախապես ուղղվել տասներկու ընտրատարածքներ. վերահաշվարկն ավարտին է հասցվել դրանցից հինգում: Դրանք անց են կացվել օրենքով սահմանված կարգով, և արդյունքներում մեծ անճշտություններ չեն հայտնաբերվել համեմատած նախնական արդյունքների հետ:

- Ընտրությունների օրվա առնչությամբ առնվազն 20 բողոք և դիմում է ընդունվել, որոնց վերաբերյալ ԿԸՀ-ը և ԸԸՀ-ը որոշումներ են կայացրել:

- Նախագահը և վարչապետը նշել են, որ ընտրախախտումները կհետապնդվեն քրեական պատասխանատվությամբ: Որոշ քրեական գործեր են հարուցվել արդյունքների կեղծման, ընտրակաշառքների և ընտրացուցակներում կեղծ ընդգրկումների առնչությամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ողջունում է այս քայլերը և շեշտում բոլոր հայտնի շեղումների հանգամանալից և անկողմնակալ քննության կարևորությունը:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 12-ի Ազգային ժողովի ընտրությունների համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ջանքեր է միավորել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽ ԽՎ)և Եվրախորհրդարանի (ԵԽ) հետ՝ Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (ԸՄԴԱ) կազմավորելու նպատակով: Ազգային ժողովի ընտրությունների հաջորդ օրը ԸՄԴԱ-ը հրապարակեց Նախնական հայտնաբերումների և եզրակացությունների վերաբերյալ համատեղ հայտարարություն: [1] Հայտարարությունն արտացոլում է նախընտրական շրջանի զարգացումները, ընտրությունների օրը և քվեների հաշվարկը ողջ գիշերվա ընթացքում: Ինչպես նշված է Հայտարարության մեջ, ընտրությունների վերջնական գնահատականը նաև կախված է ընտրական գործընթացի մնացած փուլերի անցկացումից, այդ թվում՝ քվեների ամփոփումից, վերջնական արդյունքների հայտարարումից և հետընտրական բողոքների ու դիմումների վարույթից: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը կշարունակի հետևել զարգացումներին. այս միջանկյալ զեկույցում ամփոփված են մայիսի 13-ից 22-ն ընկած ժամանակահատվածի զարգացումները: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ընտրական գործընթացի ավարտից մոտ երկու ամիս հետո կհրապարակի համապարփակ ամփոփիչ զեկույց՝ ընդգրկելով նաև առաջարկություններ:

III. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Ա. ՔՎԵՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ ԸԸՀ-ՐՈՒՄ

ԸՄԴԱ-ը 108 ՏԸՀ-ում հետևել է քվեների հաշվարկի և արդյունքների արձանագրությունների լրացմանը և 41 ԸԸՀ-ից 39-ում դիտարկել արդյունքների ամփոփումը: ՏԸՀ-ի մակարդակով դիտարկված ձայների հաշվարկը ճգճգված էր, թեև դիտարկված միայն չորս դեպքերում է այն կատարվել օրենքով նախատեսված ժամկետից դուրս (քվեարկության ավարտից 10 ժամ հետո): Թիվ 17/38 ՏԸՀ-ում համամասնականի հաշվարկը և արդյունքների արձանագրումն ավարտվել է մոտ ժամը 05:30-ին, և հետևաբար, ՏԸՀ-ը պատշաճ կերպով չի կատարել մեծամասնականի արդյունքների հաշվարկը՝ ժամանակին չլրացնելով մեծամասնականի արձանագրությունը և չհասցնելով ավարտել մինչև ժամը 06:00-ի ժամկետը[2]:

[1] Տե՛ս Նախնական հայտնաբերումների և եզրակացությունների մասին հայտարարությունը՝ http://www.osce.org/documents/odihr/2007/05/24424_en.pdf

[2] Ազգային ժողովի 131 մանդատներից 90-ն ընտրվում են համամասնական ընտրակարգով, իսկ 41-ը՝ մեծամասնական ընտրապայքարով:

Ընտրատեղամասերի 35 տոկոսի դեպքում, որտեղ հաշվարկը դիտարկվել է, ՏԸՀ-ի անդամները դժվարություն են ունեցել արդյունքների արձանագրությունները լրացնելու մեջ, և 11 դեպքում դիտարկվել է, որ ՏԸՀ-ը արգելված գործողություն է կատարել՝ փոխելով արձանագրության «սկզբնական տվյալները» (ընտրողների թիվը ըստ ընտրացուցակների, ստացված քվեաթերթիկների և ծրարների թիվը, մարված և չօգտագործված քվեաթերթիկների թիվը, քվեաթերթիկների ելունդների թիվը)[3]: ՏԸՀ-ում արդյունքների արձանագրությունների լրացման հետ կապված դիտարկված դժվարությունների ներիմաստը առավել ակնհայտ դարձավ արդյունքները ԸԸՀ-ում ամփոփելու համար տեղափոխելու պահին. արդյունքների շատ արձանագրություններ թերի կամ սխալ էին լրացվել ՏԸՀ-ի կողմից:

Հետևաբար, լայնորեն դիտարկվել է արձանագրությունների լրացում կամ ուղղում. ԸԸՀ-ի 17 տոկոսը ուղղումներ կատարելու հանձնարարական է տվել, և դիտարկվել է, թե ինչպես են ամբողջովին նոր ՏԸՀ արձանագրություններ լրացվել թիվ 13, 16 և 37 ԸԸՀ-ում: Դրանք ինչ-որ տեղ նպաստեցին ԸԸՀ-ում առկա անկազմակերպվածությանը, որտեղ ԸԸՀ-ի 31 տոկոսի դեպքում ԵՄԴԱ-ի դիտորդները հայտնել են ընթացակարգային սխալների մասին: Դրանք ներառում էին ընտրական նյութերի ապահովության և թափանցիկության հետ կապված մի շարք ընթացակարգերում տեղ գտած անփութություններ [4] : Ընդհանուր առմամբ, ԵՄԴԱ-ի դիտորդներն ամփոփման անցկացումը ԸԸՀ-ի 35 տոկոսում գնահատել են որպես վատ կամ շատ վատ:

Դիտարկվել են նաև Ընտրական օրենսգրքով արգելված գործողություններ. դիտարկվել է, որ 14 ԸԸՀ-ր փոխել են կամ հանձնարարական են տվել փոխել ՏԸՀ արձանագրություններում ամփոփված «սկզբնական տվյալները». յոթ ԸԸՀ-ում քվեաթերթիկներ պարունակող պարկերը կամ չկնքված են բերվել ՏԸՀ-ից կամ հստակ կերպով կնքվել են և կրկին բացվել[5]: Թիվ 19 ԸԸՀ-ում ԵՄԴԱ-ի դիտորդները տեսել են, թե ինչպես են քվեաթերթիկների չկնքված պարկերը տարվել Հանրապետական կուսակցության մի քարոզչական շտաբ և ապա կնքված հետ բերվել ԸԸՀ-ի տարածք: Դիտարկվել է, որ թիվ 4, 36 և 40 ԸԸՀ-ը շարունակել են արդյունքների ամփոփումը մայիսի 13-ի ժամը 14:00-ի վերջնաժամկետից հետո:

ԿԸՀ-ը զգալի ջանքեր է գործադրել արդյունքների զեկուցման համար թափանցիկ համակարգ ստեղծելու համար՝ նախատեսելով ԿԸՀ-ի կայքում արդյունքների ներկայացումն ըստ ՏԸՀ-ի: Մայիսի 12-ից 13-ն ընկած ժամանակահատվածում արդյունքները դանդաղ էին հայտնվում կայքում: Երևանի 13 ԸԸՀ-ից հայտնած արդյունքների մեծ մասը տեղադրված չէին մինչև մայիսի 13-ի կեսօրը, որը չի կարող բացատրվել հաշվարկի և ամփոփման դանդաղ տեմպով: Թեև արդյունքները հայտնվեցին ԿԸՀ-ի կողմից նախնական արդյունքները հայտարարելու ժամկետում (այն է՝ մինչև մայիսի 13-ի ժամը 20:00-ը), զգալի անփութություն է տեղի ունեցել ընտրությունների արդյունքների գրանցման խոստացած թափանցիկության մեջ, քանի որ Երևանում քվեների հաշվարկը և արձանագրությունների լրացումը, ԵՄԴԱ-ի դիտորդների տեղեկացմամբ, Երևանի գրեթե բոլոր ՏԸՀ-ում ավարտվել էր մինչև մայիսի 13-ի ժամը 06:00-ը:

ԿԸՀ-ը ԸԸՀ-ի հետ կապող համակարգչային ցանցը չէր օգտագործվել Երևանում արդյունքների տրամադրման համար: Փետրվարին ընդունված ԿԸՀ-ի որոշմամբ[6]՝ Երևանի ԸԸՀ-ի ամփոփված արդյունքների մասին տվյալները պետք է բերվեին ԿԸՀ-ի տարածք և այդտեղ ԿԸՀ-ի աշխատակազմի միջոցով համակարգիչ մուտքագրվեին: Նշվածի մասին պաշտոնական

[3] Ընտրական օրենսգիրք, հոդված 63.1
[4] ԸԸՀ-ի կողմից ՏԸՀ կնիքի ստուգումը հետևողական կերպով չի կատարվել 12 տոկոսի դեպքում. արձանագրությունների ստացականներ չեն տրվել ՏԸՀ-ին 13 տոկոսի դեպքում, իսկ ՏԸՀ արձանագրության հաստատումը ԸԸՀ-ի կողմից բաց է թողնվել 18 տոկոսի դեպքում:
[5] Թիվ 13, 19, 24, 26, 31, 33 և 36 ԸԸՀ-ր
[6] Որոշում No.39-Ն

որոշումն ակնհայտորեն լայնորեն չի ըմբռնվել և, ըստ երևույթին, հակասել է ընտրությունների օրվանն ավելի մոտ տրված տեղեկատվությանը, այդ թվում ապրիլի 12-ին ԿԸՀ-ի նախագահի՝ համակարգի շնորհանդեսին ԶԼՄ-ին տրված տեղեկատվությանը (տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի միջանկյալ զեկույց թիվ 2):

Բ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ

Մայիսի 13-ին ժամը 16:10-ին ԿԸՀ-ը հայտարարեց համամասնական ընտրապայքարի նախնական արդյունքները: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ի ինն անդամներից երեքը, որոնք ներկայացնում են նախկին «Արդարություն» դաշինքը, «Օրինաց երկիր»-ը և «Ազգային միաբանություն» կուսակցությունը, հրաժարվել են ստորագրել արդյունքների արձանագրությունն այն հիմքերի վրա, որ իրենց հայտնի ընտրախախտումների չափը հարցի տակ է դնում հայտարարված ընտրությունների արդյունքների ճշգրտությունը[7]:

Մայիսի 13-ից ի վեր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ի վիճակի է եղել համեմատել ԸԴԱ-ի դիտորդների կողմից (35 ընտրատարածքներից) ձեռք բերված 94 հաստատված ՏԸՀ «արձանագրության քաղվածքները» ԿԸՀ-ի կայքում ըստ տեղամասերի բերված համամասնական ընտրապայքարի նախնական արդյունքների հետ: Մուտքագրման 187 առանձին կետերում անճշտության դեպքեր են հայտնաբերվել: Թեև նման սխալները հնարավոր է, որ դիտումնավոր չէին, դրանք ներառում էին սխալ տողերում թվերի լրացում և սխալ հաշվարկներ: Այդուհանդերձ, նշանակալի անճշտություններ են նաև հայտնաբերվել այսպես կոչված սկզբնական տվյալներում: Ընտրական օրենսգրքի համաձայն՝ այս տվյալները չպետք է փոփոխվեին նախապես արձանագրվելուց հետո:

Մայիսի 16-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի դիտորդները ականատես եղան, թե ինչպես է ԿԸՀ-ի աշխատակազմը Երևանում գտնվող ԿԸՀ-ի տարածքում ԸԸՀ-ի ներկայացուցիչների ներկայությամբ ամփոփման համակարգչային ցանց վերամուտքագրում ՏԸՀ արձանագրության համամասնական ընտրապայքարի տվյալները: ԸԴԱ-ին բացատրեցին, որ ԸԸՀ-րի կողմից Երևան բերված բնօրինակ արձանագրություններն օգտագործվում են տվյալների վերամուտքագրման համար, և որ ընտրությունների վերջնական արդյունքներն այդ հիմքի վրա կսահմանվեն:

Մայիսի 19-ին ԿԸՀ-ը անցկացրեց համամասնական ընտրակարգով ընտրությունների վերջնական արդյունքների սահմանման և հայտարարման շուրջ իր նիստը: Հայտարարված վերջնական արդյունքներում համեմատած նախնական արդյունքների հետ աննշան փոփոխություններ կային ամփոփված թվերում, այնուամենայնիվ դրանք, կարծես թե, ազդեցություն չունեցան ընտրությունների արդյունքների վրա, որոնք որ հաշվարկվել էին ըստ նախնական արդյունքների: ԿԸՀ-ի նույն երեք անդամները, որոնք հրաժարվել էին ստորագրել նախնական արդյունքների արձանագրությունը, հրաժարվեցին նաև ստորագրել վերջնական արդյունքների արձանագրությունը:

Մինչ օրենքով նախատեսվում է, որպեսզի ըստ ՏԸՀ-ի բաշխված համամասնական ընտրապայքարի ԸԸՀ արձանագրությունները հրապարակավ փակցված լինեն, մեծամասնական ընտրապայքարի արդյունքների փակցնելն ըստ ՏԸՀ-ի սահմանված չէ Ընտրական օրենսգրքում: Հետևաբար, վստահված անձինք, դիտորդները և այլ շահագրգիռ կողմեր հնարավորություն չունեին ստուգելու հաստատված ՏԸՀ արձանագրությունների

[7] Նախնական արդյունքների համաձայն՝ թե Հայաստանի Ժողովրդական Կուսակցությունը (նախկին «Արդարություն» դաշինքի գլխավոր գործընկերը) և թե Ազգային Միաբանություն Կուսակցությունը չանցան 5 տոկոսի սահմանը՝ խորհրդարանում իրենց ներկայությունը պահպանելու համար, և թեև Օրինաց երկիրն անցավ սահմանը, նրա արդյունքներն էապես ցածր էին համեմատած 2003 թվականի հետ:

պատճենների ճշտությունը՝ համեմատելով այն մեծամասնական ընտրապայքարի ԸԸՀ-ի արձանագրության հետ: Ավելին, ՏԸՀ-ի և ԸԸՀ-ի տարածքներում արդյունքների արձանագրությունների (համամասնական և մեծամասնական) փակցնելու ժամանակահատվածը սահմանված չէ: Շատ տեղերում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը դիտարկել է, թե ինչպես են արձանագրությունները հանվել ընտրությունների օրվանից քիչ հետո: Մայիսի 18-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը նկատել է, որ մեծամասնական ընտրապայքարի արդյունքների վերաբերյալ բոլոր ԸԸՀ արձանագրությունների տվյալները հանվել են ԿԸՀ-ի կայքից:

Արդյունքների հաշվարկի, ամփոփման և հրապարակման ընթացքում տեղ գտած խնդիրների և խախտումների աստիճանը և թափանցիկության մեջ առկա թերությունները չեն նպաստում վճռական նշանակություն ունեցող ընտրական ընթացակարգերի նկատմամբ հանրության մոտ վստահության ամրապնդմանը: Իշխանությունները սկսել են ուղղիչ քայլեր ձեռնարկել, այդ թվում՝ ընտրությունների արդյունքների կեղծման համար թիվ 15/16 ՏԸՀ-ի բոլոր ինն անդամների վերաբերյալ քրեական քննության նախաձեռնումը, ինչպես նաև ընտրակաշառքների և ընտրացուցակում կեղծ ընդգրկումների առնչությամբ քրեական գործերի հարուցումը: Նախագահ Ռոբերտ Քոչարյանը և վարչապետ Սերժ Սարգսյանը նշել են, որ ընտրախախտումները հետապնդվում են քրեական պատասխանատվությամբ (տե՛ս նաև ստորև):

Գ. ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Ընտրական օրենսգրքով նախատեսվում է, որ թեկնածուները, վստահված անձինք կամ ՏԸՀ-ի անդամներն իրավունք ունեն կոնկրետ ընտրատեղամասում բողոքարկելու քվեարկության արդյունքները՝ վերահաշվարկի դիմում ներկայացնելով համապատասխան ԸԸՀ: Թեև նման դիմումների մեծ քանակի դեպքում հարցի տակ է դնում ԸԸՀ-ի՝ աշխատանքը սահմանված ժամկետներում ավարտելու հնարավորությունը, Ընտրական օրենսգիրքը թույլ է տալիս ճկունություն ցուցաբերել, որպեսզի ԸԸՀ-ները երկարացնեն իրենց աշխատանքային ժամերը նման հնարավոր դեպքերին արձագանքելու համար[8], և չկան օրենքով սահմանված դրույթներ, որոնք որևէ պատճառ են նշում, թե ինչու ԸԸՀ-ը կարող է հրաժարվել վերահաշվարկ անցկացնել դիմումը ճիշտ լինելու պարագայում: Այն դեպքերում, երբ ԸԸՀ-ները մերժել են վերահաշվարկի դիմումները, դրա վերաբերյալ որոշումը կայացվել է ընթացակարգային հիմքերի վրա և օրենքի համաձայն[9]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին իրազեկել են վերահաշվարկի ավելի քան 30 դիմումի վերաբերյալ, որոնք ազդում են 12 ընտրատարածքների ավելի քան 200 ընտրատեղամասերի վրա. դիմումները հիմնականում վերաբերում էին մեծամասնական ընտրապայքարին: Այս դիմումներից շատերը հետագայում ետ են վերցվել բողոքատուների կողմից: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնի երկու դեպքերում (թիվ 15 և 25 ԸԸՀ) բողոքատուները վերահաշվարկի իրենց դիմումները ետ են վերցրել վերահաշվարկը սկսվելուց հետո՝ անվստահություն ցուցաբերելով ԸԸՀ-ի վերահաշվարկման գործընթացին: Թիվ 15 ԸԸՀ-ում վերահաշվարկի ընթացքի վրա ազդեց մայիսի 16-ից 17-ը ԸԸՀ-ի շրջակայքում անցկացված ցույցը, ինչպես նաև քվորում ապահովելու համար ձգձգումները:

Հինգ տեղերում, որտեղ վերահաշվարկներն ավարտին են հասցվել, ինչպես հայտնում են, դրանք անց են կացվել հանգիստ մթնոլորտում և ընթացակարգի համաձայն: Թիվ 33 ԸԸՀ-ը չհասցրեց վերահաշվարկի ամփոփումը ժամկետում կատարել, բայց հայտնի է, որ ժամկետը երկարացվել է ԿԸՀ-ի կողմից: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված վերահաշվարկների արդյունքում

[8] Ընտրական օրենսգիրք, հոդված $40^2.7$
[9] Ընտրական օրենսգիրք, հոդված 40^2

չարձանագրվեցին այնպիսի արդյունքներ, որոնք նշանակալիորեն կտարբերվեին բնօրինակ արձանագրություններում նշված արդյունքներից:

Դ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ընտրությունների արդյունքները կարող են վիճարկվել միայն Սահմանադրական դատարանում: Դատարանի պաշտոնյաները տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքով՝ այն բողոքներ կընդունի թե՛ համամասնական և թե՛ մեծամասնական ընտրակարգի համար վերջնական արդյունքների հայտարարումից հետո յոթերորդ օրը, այն է՝ մայիսի 26-ը համամասնական ընտրակարգի և հիմնականում մայիսի 24-ը մեծամասնական ընտրակարգի համար [10] (Ընտրական օրենսգրքում նշված է յոթօրյա ժամկետում, սակայն Սահմանադրական դատարանի պաշտոնյաները նշել են, որ գերակայում է Սահմանադրական դատարանի մասին օրենքում օգտագործված տարբեր ձևակերպումը): Սահմանադրական դատարանը տասնհինգ օր ունի համամասնական արդյունքների հայտարարումից հետո դրանց վերաբերյալ վերջնական վճիռ կայացնելու համար[11], մինչդեռ տրվում է մեկ ամիս մեծամասնականի շուրջ վեճերի վերաբերյալ վճիռ կայացնելու համար: Ավելին՝ Սահմանադրական դատարանը կարող է որոշել երկարացնել մեծամասնական ընտրապայքարի համար վճիռ կայացնելու ժամկետը մինչև 50 օր:

Սույն շարադրանքի դրությամբ Սահմանադրական դատարանը մեկ բողոք է ստացել մեծամասնական թեկնածու Հեղինե Բիշարյանից (Օրինաց երկիր), որը վիճարկում է թիվ 11 ԸԸՀ-ի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքները:

IV. ԱՅԼ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԲՈՂՈՔՆԵՐ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել են (տարբեր քաղաքական կուսակցությունների և Օրինաց երկիրը ներկայացնող մեկ ԿԸՀ-ի անդամի անունից) ԿԸՀ ուղղված յոթ բողոքի մասին, և մոտ երկու անգամ ավելի բողոքներ են ներկայացվել ԸԸՀ-ը, որոնք վերաբերում են ընտրությունների օրը տեղի ունեցած խախտումներին՝ հիմնականում ընթացակարգային, ընտրակաշառքներին, լցոնումներին, զինծառայողների քվեարկությանը, ոչ լիազորված անձանց ներկայությանը և ընտրական քարոզչությանը:

ԿԸՀ-ն անկեղծ ջանքեր է գործադրել վեճերը լուծելու ուղղությամբ՝ ժամանակին պատասխանելով բոլոր բողոքներին: Իր կողմից ստացված բողոքների մեծ մասը մերժվել են իրավազորության բացակայության հիմքի վրա կամ հիմքի բացայակության պատճառով (բերված երկրորդ պատճառի մի դեպքում, որը վերաբերում էր ընտրակաշառքներին և լցոնմանը, ԿԸՀ-ը խորհրդակցել է համապատասխան ԸԸՀ-ի հետ նախքան որոշում կայացնելը):

ԸԸՀ-ը բողոքները թափանցիկ է վարել, սակայն որոշ հարցեր մտահոգություն են առաջացրել: Մասնավորապես, ընտրությունների օրը թիվ 17 ԸԸՀ-ը հրաժարվել է քննության առնել մի թեկնածուի կողմից ներկայացված չորս բողոք: Բողոքները սխալմամբ հասցեագրվել էին առանձին ՏԸՀ-ի և ոչ ԸԸՀ-ին, ԸԸՀ-ն իր հերթին մերժեց բողոքները, մինչդեռ կարող էր դիմումատուին խրախուսել ուղղել ֆորմալ շրջանակում տեղ գտած սխալը[12]:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին նաև տեղեկացրել են ընտրությունների օրը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից ստացված տասը դիմումների մասին,

[10] ԸԸՀ-ի մեծ մասը հայտարարել են վերջնական արդյունքները մայիսի 17-ին, բայց առնվազն մեկն ավելի վաղ է հայտարարել վերջնական արդյունքները:
[11] Սահմանադրական դատարանի մասին օրենք, հոդված 74
[12] Ընտրական օրենսգիրք, հոդված 40[1].3

որոնք հնարավոր է քրեական գործեր հանդիսանան: Ինչպես նշված է վերևում, որոշ քրեական գործեր արդեն հարուցվել են:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ը կշարունակի հետևել բողոքների և դիմումների գործընթացին: Այն գնահատում է Հայաստանի Հանրապետության իշխանությունների հետ շարունակական համագործակցությունը: